ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«21» 03 2025 թ.
№ ԲՄԱՊՁԲ-24-4/4-2-381

«Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00092112)
տնօրեն Ա. Դոխոյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 36
էլ. հասցե՝ 1todosaka@gmail.com
հեռ. 098-25-11-33

ՀՀ պաշտպանության նախարարության և «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի միջև 30.09.2024թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-24-4/4-2 ծածկագրով գնման պայմանագրի և դրա հիման վրա 20.12.2024թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 2 (37)-րդ չափաբաժնի շրջանակներում «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ն համաձայնագիր կնքելուց հետո 50 օրվա ընթացքում պետք է մատակարարեր ընդհանուր՝ 300 հատ կտրող սկավառակներ (Կտրող սկավառակ մետաղի համար (230x22x2.5)), սակայն «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի կողմից 07.02.2025թ. ներկայացվել է դիմում (Մուտք ՊՆՏ-487 առ 10.02.2025թ.) այն մասին, որ Ընկերությունը հրաժարվում է մատակարարել վերոնշյալ Պայմանագրի 2 (37)-րդ չափաբաժնի մասով նախատեսված ապրանքները և միևնույն ժամանակ պատրաստակամություն է հայտնել վճարելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. մարտի 21-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **13 500** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **20 250** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել **675** ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. մարտի 31-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարները, ապա «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. մարտի 31-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի կողմից տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ տուգանքի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ